ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերի 17-րդ թողարկում

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի 17-րդ թողարկման հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	25 ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	320 000 հատ
Թողարկման ընդհանուր ծավալ	8 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային տոկոսադրույք	Տարեկան 5.25%, որը կհաշվարկվի տեղաբաշխման առաջին օրվանից սկսած
Արժեկտրոնների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	51 ամիս
Տեղաբաշխման ժամկետ	22/01/2018թ.-06/04/2018թ.
Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը և երեք լրացումները գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար 25/07/2017թ., 21/09/2017թ. 30/11/2017թ. և 16/01/2018թ.:	
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 22/01/2018թ.-ից մինչև 06/04/2018թ.-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ ցուցակումից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում, մասնավորապես՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի հաշիվ ունենալ կամ բացել «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և բանկային հաշիվներ՝ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հանդիսանում է հաշվի օպերատոր, հետևաբար պահանջվող բոլոր հաշիվները հնարավոր է բացել հենց	

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում՝ անվճար և առանց սպասարկման վճարի՝ պարտատոմսի գործողության ընթացքում: Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառել և շուկայական տոկոսադրույքների կտրուկ տատանումների բացակայության պայմաններում ստանալ ինչպես ներդրված գումարն, այնպես էլ կուտակված տոկոսագումարները:
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում ներդրված միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:
Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 22.04.2022թ.

Ծանուցում.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 17-րդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով	
Արժեկտրոնային եկամուտների 1-ին վճարում	22.04.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 2-րդ վճարում	22.07.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 3-րդ վճարում	22.10.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 4-րդ վճարում	22.01.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 5-րդ վճարում	22.04.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 6-րդ վճարում	22.07.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 7-րդ վճարում	22.10.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 8-րդ վճարում	22.01.2020թ.

Արժեկտրոնային եկամուտների 9-րդ վճարում	22.04.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 10-րդ վճարում	22.07.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 11-րդ վճարում	22.10.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 12-րդ վճարում	22.01.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 13-րդ վճարում	22.04.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 14-րդ վճարում	22.07.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 15-րդ վճարում	22.10.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 16-րդ վճարում	22.01.2022թ.
Արժեկտրոնային եկամուտների 17-րդ վճարում և պարտատոմսերի մարում	22.04.2022թ.
Այն դեպքում, երբ արժեկտրոնային եկամուտների վճարման կամ պարտատոմսերի մարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:	
Արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման գումարի փոխանցումը կատարվելու է ՀԿԴ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին՝ պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման օրվա մինչև ժամը 14:00-ն: Արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև մարման գումարը վճարվում են վճարման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:	
Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված Պարտատոմսերի թողարկման ծրագրային **ազդագրում,** ծրագրային ազդագրի լրացումներում և թողարկման վերջնական պայմաններում:	